Արձանագրություն N 3

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի տարածքում գտնվող նստարանների, խաղային սարքավորումների, զրուցատաղավարների, աղբամանների, խաղադաշտերի և անցուղիների վերանորոգման նախահաշվային փաստաթղթերի կազման աշխատանքների ձեռքբերման ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/50 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան

06.06.2019թ.
Ժամը՝ 11:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Փայտյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Ղազարյան /գնահատող/, Մ. Մանուկյան /գնահատող/, Ա. Սուչյան /բացող/, Ս. Ղազարյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

(Ռ. Փայտյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված շեմը:

1.3 Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ի հայտը՝ համաձայն Կարգի 44-րդ կետի:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

(Ռ. Փայտյան)

2.1 Հիմք ընդունելով սույն ընթացակարգի 1-ին կետով ընդունած որոշումը և հաշվի առնելով, որ ընթացակարգին հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից, որի հայտը մերժվել է՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/50 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած,

2.2 Հաստատել ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ռ. Փայտյան

Անդամներ՝ ---------- Ս. Ղազարյան

---------- Մ. Մանուկյան

---------- Ռ. Ղասաբօղլյան

---------- Ա. Սուչյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան